DOI: 10.57192/18291864-2024.3-249

«[Հայաստանը] պիտի սորվի ո՛չ միայն հողին վրայ
ապրող ժողովուրդ, կենցաղ, ընկերութիւն և
պետութիւն, այլ նաեւ ազգ ըլլալու գաղափարը. ինչ որ
կը նշանակէ թէ հող մը, որ մշակոյթ չունի, կալուած է միայն[1]»:

Խաչիկ Թոլոյեան

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

Խաչիկ Թոլոյեանի ծննդյան 80-րդ տարեդարձի առթիվ*

Բանալի բառեր – Խաչիկ Թոլոյեան, սփյուռքագիտություն, ինքնություն հայկական սփյուռք, «Սփյուռք. Անդրազգային հետազոտությունների հանդես»:

2024 թ. օգոստոսի 30-ին լրացավ գրականագետ, սփյուռքագիտության ոլորտի ականավոր գիտնական Խաչիկ Մինասի Թոլոյեանի 80-ամյակը:

Սփյուռքագիտության՝ որպես նոր գիտակարգի, զարգացման և սփյուռքի տեսաբանման գործում նրա ներդրումը մեծ է ոչ միայն որպես գիտնական-հետազոտող, այլև որպես «Սփյուռք. անդրազգային հետազոտությունների հանդես»-ի (“Diaspora: A Journal of Transnational Studies") հիմնադիր-խմբագիր: Պարբերականը հիմնվել է 1991 թ.՝ դառնալով այն հիմնական հարթակը, որի էջերում ձևավորվել են արդի սփյուռքագիտության՝ որպես միջգիտակարգային կամ բազմագիտակարգային ուղղության հիմքերը:

*Ընդունվել է տպագրության 25.09.2024 :

[1] «Յառաջ», Փարիզ, Յուլիս 3, 1998, էջ 2:

Խաչիկ Թյոլյոլյանը ծնվել է 1944 թ. Սիրիայի Հալեպ քաղաքում՝ սփյուռքահայ հայտնի մտավորական, գրականագետ, ազգային գործիչ Մինաս Թյոլյոլյանի և նվիրյալ ուսուցչուհի, թարգմանչուհի Գոհար Զոպանյանի ընտանիքում: Հայկական կրթությունը ստացել է Հալեպի Հայկազյան և Եգիպտոսի Գալուստյան վարժարաններում, այնուհետև ընդունվել է Բեյրութի Ամերիկյան համալսարանի Միջազգային քոլեջ: 1960 թ., երբ Խ. Թյոլյոլյանը տասնվեց տարեկան էր, ընտանյոք տեղափոխվում են Միացյալ Նահանգներ՝ Մասաչուսեթս նահանգի Վաթերթաուն քաղաք:

Պրոֆեսորը 1966 թ. գերազանցությամբ ավարտել է Հարվարդի համալսարանը՝ ստանալով մոլեկուլային կենսաբանության բակալավրի աստիճան: Ռոդ Այլենդի համալսարանում ծովային կենդանաբանության ոլորտում երեք տարի հետազոտություն իրականացնելուց հետո՝ 1969 թվականից, հակվել է դեպի գրականությունը և նույն համալսարանում ստացել անգլոամերիկյան գրականության մագիստրոսի կոչում (1970 թ.), այնուհետև Բրաուն համալսարանում՝ համեմատական գրականության գիտությունների թեկնածուի (PhD) կոչում (1975 թ.)՝ պաշտպանելով “Form and in-form-ation in narrative” թեմայով ատենախոսությունը, որն անդրադառնում է պատումի (narrative) հարցերին՝ Իլիականից մինչև Ու. Ֆոլկներ, Ջ. Ջոյս և Մ. Բյուտոր[2]:

1974 թվականից դասախոսել է Վեսլեյան համալսարանում, որտեղ եղել է Հումանիտար գիտությունների կենտրոնի փոխտնօրեն, տնօրեն, ապա՝ Անգլերեն բաժանմունքի տնօրեն: Դասավանդել է կանոնիկ գրականություն, հուդայաքրիստոնեական ավանդության պատմական և փիլիսոփայական տեքստեր, արդի գրականություն, գրականության և մշակույթի տեսություն, սփյուռքագիտություն: Եղել է Ջոն Հոփկինսի և Օրեգոնի պետական համալսարանների Հումանիտար գիտությունների կենտրոնների գիտաշխատող, հրավիրյալ պրոֆեսոր՝ Միչիգանի (1984 թ.) և Կոլումբիայի համալսարաններում (1998 թ.): Ավելի քան յոթանասուն դասախոսություններ է կարդացել ամերիկյան և եվրոպական մի շարք համալսարաններում տարբեր թեմաներով՝ ժամանակակից վեպ (modern novel), հայ գրականություն (Armenian literature), հայկական ազգայնականություն (Armenian nationalism), սփյուռքագիտություն, անդրազգայնություն (transnationalism) և այլն: Դասախոսություններ է ունեցել նաև Երևա-

[2] **Երամեան Մ.,** 10 Հարցում Խաչիկ Թէօլէօլեանին՝ Մարուշ Երամեանէն (https://pakine.net/archives/9414 / (մուտք՝ 24.10.2020)):

նի պետական համալսարանում, Հայաստանի ամերիկյան համալսարանում, Երևանի պետական մանկավարժական համալսարանում:

Խ. Թյոլյոլյանն ակտիվորեն մասնակցում է սփյուռքահայ կյանքին: Եղել է ԱՄՆ Արևելյան թեմի Հայ ազգային կրթության խորհրդի անդամ, Ամերիկայի հայկական համագումարի տնօրենների խորհրդի անդամ, Հետազոտությունների և փաստագրման Զորյան հիմնարկության անդամ:

1979 թ. համատեղ հիմնել և մինչև 2009 թ. համախմբագրել է «Փինչոնական նոթեր» (Pynchon Notes) պարբերականը՝ նվիրված ամերիկացի հայտնի գրող Թոմաս Փինչոնի ստեղծագործությանը և ամերիկյան ժամանակակից գրականության և մշակույթի հետ նրա կապի ուսումնասիրմանը:

Տարիների ընթացքում շարունակաբար ընդլայնվել են Խ. Թյոլյոլյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները: 1990-ից ի վեր նրա գիտական սևեռումի առարկան են դարձել հայ և օտարազգի սփյուռքի տարբեր համայնքների համեմատական ուսումնասիրությունը, ազգության, ազգայնականության, անդրազգայնության խնդիրները:

Մոլեկուլային կենսաբանությունից, ծովային կենդանաբանությունից, ապա սալամանդրի ողնաշարի մասին գիտական փոքրիկ հետազոտությունից հետո դեպի հումանիտար գիտություններ, ազգության, ազգայնականության, անդրազգայնության խնդիրներ. ո՞րն էր այսպիսի անսովոր անցման պատճառը: Այդ հարցին պրոֆեսորը պատասխանում է, որ այնպիսի ժամանակահատվածում, երբ աշխարհում տեղի էին ունենում կարևոր փոփոխություններ, դժվար էր կողքից դիտել և լաբորատորիայում փակված ուսումնասիրություններ անել: Նշելի է, որ սփյուռքագիտությանը հակվելու առումով մեծ է եղել նաև Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցին հաջորդած շրջանում զինյալ պայքարի հանդեպ հետաքրքրության դերը[3]: Այս թեմայով Խ. Թյոլյոլյանի գիտական հրապարակումները[4] առանձնանում են հարցի քննության դիտանկյունից. իրադարձությունները ներկայացվում են ոչ թե որպես ահաբեկչական գործողություն, այլ խորքային վերլուծության է ենթարկվում այն նարատիվային և մշակութային դաշտը, որոնք հանգեցրին նման վրիժառուական

[3] **Գոյունեան Աւ. Քինյ. Գ.,** Խաչիկ Թէօլէօլեան եւ սփիւռքագիտութիւնը (ժէ.), (https://bit.ly/3C6hp5H / (մուտք՝ 24.10.2024)):

[4] Տե՛ս **Tololyan Kh.,** Cultural Narrative and the Motivation of the Terrorist, Journal of Strategic Studies, 1987, 10(4): pp. 217-233. Տե՛ս նաև **Tololyan Kh.,** Martyrdom as Legitimacy: Terrorism, Religion and Symbolic Appropriation in the Armenian Diaspora. In Contemporary Research on Terrorism, Ed. Wilkinson P., Stewart A., Aberdeen, UK, Aberdeen University Press, 1987: pp. 89-103. Տե՛ս նաև **Tololyan Kh.,** Terrorism In a Textual Community, Critical Exchange, 1987, vol. 22: pp. 23- 36.

գործողությունների: Սա, թերևս, նյութը օտար լսարանին ամենահասկանալի կերպով մատուցելու եղանակն էր:

Համագործակցելով Կանադայի հետազոտությունների և փաստագրման Զորյան ինստիտուտի հետ՝ 1991 թ. Խ. Թոլոյոլյանը հիմնում և խմբագրում է «Սփյուռք. անդրազգային հետազոտությունների հանդես»[5], որը 1991–1996 թթ. հրատարակվել է Օքսֆորդի համալսարանի, այնուհետև՝ Տորոնտոյի համալսարանի հրատարակչության կողմից: Այն անդրադառնում է հին և նոր սփյուռքներին, ազգությանը, ազգայնականությանը, անդրազգայնությանը (transnationalism), համաշխարհայնացմանը (globalization), գաղթականությանը (migration), աքսորին (exile), փոքրամասնություններին (minorities), ետգաղութատիրությանը (postcolonialism): 1991 թ. հանդեսի առաջին համարն իսկ ստացել է «Լավագույն նոր գիտական հանդես» մրցանակը, որն ԱՄՆ-ում տարեկան շնորհվում է գիտական պարբերականների խմբագիրների խորհրդի կողմից[6]:

Հանդեսի հիմնադրման հարցում, հատկանշական է, որ վերը նշված հասկացությունների հանդեպ ամերիկյան ակադեմիական շրջանակների աճող հետաքրքրությունից և դրանք գիտական խորքային ուսումնասիրության առարկա դարձնելու անհրաժեշտությունից բացի, առկա էր մեկ այլ գործոն ևս. պարբերականը հիմնելով՝ Խ. Թոլոյոլյանը մտածում էր. «լաւ կ'ըլլայ եթէ հայերս օր մըն ալ առաջին քայլը մենք առնենք եւ դուռի կղպանքին բանալին մեր ձեռքը ունենանք, փոխանակ միշտ երթալ ուրիշներուն դուռը թակելու, աղերսելով՝ «Արտօնեցէ՛ք մեզի, որ մենք ալ մեր Սփիւռքի մասին բան մը հրատարակենք»[7]: Այս առումով՝ Խ. Թոլոյոլյանը և Զորյան ինստիտուտի գործընկերներն աչքի առջև ունեին մասնավորապես ցեղասպանագետ Վահագն Դադրյանի փորձառության օրինակը, երբ նրա լավ մշակված հոդվածները՝ մասնագիտական տարբեր հանդեսներում թուրք և թրքամետ մասնագետների կողմից հրատարակման բարդությունների էին հանդիպում[8]:

Սփյուռքագիտության համար առանցքային են նրա «Ազգ-պետությունը և նրա Այլերը. նախաբանի փոխարեն» (The Nation-State and

---

[5] Խ. Թէօլէօյանը հանդեսը խմբագրել է մինչև 2020 թ. վերջին համարը, որից հետո հանդեսի խմբագրումը ստանձնել են Թալար Շահինյանը (համեմատական գրականության մասնագետ) և Սոսի Գասպարյանը (համեմատական քաղաքագիտության մասնագետ):

[6] **Գոյունեան Աւ. Քինյ. Գ.,** Խաչիկ Թէօլէօլեան Եւ Սփիւռքագիտութիւնը (Ա.) (https://www.aztagdaily.com/archives/603460 / (մուտք՝ 24.10.2024)

[7] Տե՛ս նույն տեղում:

[8] **Երամյան Մ.,** 10 Հարցում Խաչիկ Թէօլէօլեանին՝ Մարուշ Երամեանէն (https://pakine.net/archives/9414 / (մուտք՝ 24.10.2020)):

its Others: In Lieu of a Preface)[9], «Սփյուռքագիտության ժամանակակից դիսկուրսը. Հարավային Ասիայի, Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի համեմատական ուսումնասիրություն» (The contemporary discourse of diaspora studies, Comparative Studies of South Asia, Africa and the Middle East)[10], «Վերաքննելով սփյուռք(ներ)ը. պետականազուրկ ուժը անդրազգային պահին» (Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment)[11], «Սփյուռքի դիսկուրսի ամերիկյան մոդելը» (The American Model of Diasporic discourse)[12] բարձրարժեք ուսումնասիրությունները: Հայկական սփյուռքի վերաբերյալ ուսումնասիրություններից հարկ է առանձնացնել «Վերասահմանելով սփյուռքները. հին մոտեցումներ, նոր ինքնություններ. հայկական սփյուռքը միջազգային համատեքստում» (Redefining Diasporas: Old Approaches, New Identities. The Armenian Diaspora in an International Context)[13], «Վերնախավերն ու հաստատությունները հայկական սփյուռքում» (Elites and Institutions in the Armenian Transnation), «Հայրենիքից անդին. աքսորային ազգայնականությունից դեպի սփյուռքյան անդրազգայնություն» (Beyond the homeland: from exilic nationalism to diasporic transnationalism), «Վտարանդի կառավարությունները հայկական քաղաքականության մեջ» (Exile Governments in the Armenian Polity) և այլ ուսումնասիրություններ:

***

Երբ սկսեց հրատարակվել «Diaspora» հանդեսը, գիտական խոսքը սփյուռքի վերաբերյալ, անշուշտ, նոր չէր, սակայն ոչ այն ծավալներով և հատկապես ոչ այնպիսի տեսական վերացարկումներով, որ պետք է լիներ առաջիկա տարիներին: «Diaspora» հանդեսի հրապարակումից հետո՝ հաջորդող տարիների ընթացքում իրականացվեցին սփյուռքի վերաբերյալ մեծաթիվ տեսական և էմպիրիկ ուսումնասիրություններ, տարբեր համալսարաններում հիմնվեցին սփյուռների ուսումնասիրությամբ զբաղվող կենտրոններ, նոր պարբերականներ,

[9] Տե՛ս **Tololyan Kh.,** The Nation-State and its Others: In Lieu of a Preface. Diaspora, 1991, 1 (1), pp. 3-7.

[10] Տե՛ս **Tololyan Kh.,** The contemporary discourse of diaspora studies, Comparative Studies of South Asia, Africa and the Middle East, 27 (3), 2007, pp. 647-655.

[11] Տե՛ս **Tololyan Kh.,** Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment, Diaspora: A journal of Transnational Studies, 1996, 5 (1), pp. 3-36.

[12] Տե՛ս **Tololyan Kh.,** The American Model of Diasporic discourse. In Diasporas and Ethnic Migrants, Germany, Israel and Russia in Comparative Perspective, ed. by Munz R., Ohliger R., London, 2003, pp. 56-73.

[13] Տե՛ս **Tololyan Kh.,** Redefining Diasporas: Old Approaches, New Identities. The Armenian Diaspora in an International Context, London, Armenian Institute, 2002.

ձևավորվեցին տեսաբանական տարբեր ուղղություններ[14]: Նախորդ մի քանի տասնամյակների ընթացքում սփյուռքի նկատմամբ հետաքրքրության աճը, ինչպես նաև երևույթի ընկալման այն առանցքային փոփոխությունը, որում «սփյուռք» բառն այլևս չէր զուգորդվում տեղահանության, կորստի, տկարության հետ և, ավելին, սփյուռքի մի շարք հատվածներ ձեռք էին բերել զգալի նշանակություն միջազգային հարաբերություններում, ստիպում էին գիտության մեջ քննության հատուկ առարկա դարձնել սփյուռքին առնչվող իրողությունները: Վերջիններս սկսել էին ուսումնասիրվել մի շարք գիտակարգերի՝ պատմագիտության, սոցիոլոգիայի, մարդաբանության, քաղաքագիտության շրջանակներում, իսկ սփյուռքագիտությունը մեկտեղում էր այդ գիտակարգերը՝ հավակնելով դառնալու նոր ու ինքնուրույն, գիտաճյուղ՝ ներդրված կամ համալիր կերպով կապված ազգայնականության, անդրազգայնության, համաշխարհայնացման, ետգաղութատիրության վերաբերյալ ուսումնասիրությունների կողքին:

Սփյուռքագիտական հետազոտությունների համար ելակետային է «սփյուռք» եզրույթի սահմանման խնդիրը, որն ըստ էության կապված է, ժամանակի ընթացքում բառի իմաստաբանական դաշտի ընդլայնման հետ, այն է «սփյուռք»-ը, որը նախապես կիրառվել էր հրեական, ապա նաև հունական և հայկական համապատասխան սոցիալական ձևավորումներն անվանելու համար, 1960-ական թվականներից ի վեր սկսել էր ներառել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են ներգաղթյալը (immigrant), վտարանդին (expatriate), փախստականը (refugee), աշխատողը (guestworker), աքսորային համայնքը (exile community), անդրծովյա համայնքը (overseas community), էթնիկական համայնքը[15]: Նման ընկալումը աստիճանաբար դառնում էր տարածված, սակայն Խ. Թյոլյոլյանը, ինչպես նաև մի շարք այլ ուսումնասիրողներ (Վ. Սաֆրան, Ռ. Քոհեն, Գ. Շեֆֆեր, Ռ. Բրուբեյքեր) հստակորեն տարբերակում են սփյուռքը հայրենիքից դուրս հաստատված մյուս խմբերից: Չնայած նրան, որ Խ. Թյոլյոլյանը 1996 թ. գրված իր ընդարձակ հոդվածներից մեկում նշում է, որ «սփյուռքը» շատ ընդգրկուն

[14] Տե՛ս **Վարդանյան Հ.,** Սփյուռքի սահմանումը և եզրույթի իմաստային ընդլայնման պատճառները ըստ Խաչիկ Թյոլյոլյանի, «Հայագիտության հարցեր» հանդես, Եր., 2016, N 2 (8), էջ 95-108:

[15] Տե՛ս **Tololyan Kh.,** The Nation-State and its Others: In Lieu of a Preface. Diaspora, 1991, 1 (1), p. 3-7. Տե՛ս նաև **Tololyan Kh.,** Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment, Diaspora: A Journal of Transnational studies, 1996, 5 (1), pp. 3-36:

հասկացություն դառնալու վտանգի տակ է[16], իսկ արդեն 2007 թվականին՝ որ «սփյուռքի» և մյուս նմանատիպ հանրույթների միջև տարբերակվածությունը պահպանելու պայքարը տանուլ է տրված[17]. նրա ուսումնասիրությունները լավագույնս քննում են, թե իրարից որքան տարբեր են սփյուռքը և «սփյուռք» անվանումը ստացած մյուս խմբերը[18]:

Խ. Թոլոյոլյանը սփյուռքի համար առանցքային է համարում հետևյալ հարացուցային հատկանիշները.

1. Հարկադրանք, որը պատճառ է դառնում սփռումի, երբ մեծ թվով մարդիկ քաղաքական, տնտեսական կամ այլ պարտադրանքով արմատախիլ են արվում հայրենիքից և տարաբնակվում:

2. Նույնականության զգացում, որը կա՛մ հենվում է նախքան սփռումը հայրենիքում արդեն իսկ ձևավորված ինքնության վրա, կա՛մ առաջանում, երբ բնօրրանում տարանջատումներ, բայց նաև ընդհանրություններ ունեցող խմբերին ընդունող երկիրն ընկալում է իբրև նույնականների:

3. Հավաքական հիշողություն՝ որպես ինքնության հիմնատարր. համայնքները պահպանում են, իսկ երբեմն կառուցում հավաքական հիշողություն:

4. Համայնքային սահմանների (ինքնության) պահպանում, որը կարող է լինել կա՛մ հենց սփյուռքների կամքով, կա՛մ ընդունող երկրի պահանջով, որը չի ցանկանում նրանց ձուլել, կամ՝ այս երկուսը միաժամանակ:

5. Հաստատութենական (ինստիտուցիոնալ) կապ սփյուռքյան տարբեր համայնքների և հայրենիքի միջև, իսկ վերջինիս բացակայության դեպքում սփյուռքի կողմից ցուցաբերվող կամք՝ պահպանելու հավատարմությունը հայրենիքի միֆականացված գաղափարին[19]:

6. Տևականություն. ցրոնքը սփյուռք է դառնում այն դեպքում, երբ որպես առանձին հավաքականություն շարունակում է գոյություն ունե-

[16] Տե՛ս **Tololyan Kh.,** Rethinking Diaspora(s) …, pp. 3-36:
[17] Տե՛ս **Tololyan Kh.,** The contemporary discourse of diaspora studies, Comparative Studies of South Asia, Africa and the Middle East 27(3), 2007, pp. 647–55:
[18] Տե՛ս **Tololyan Kh.,** Rethinking Diaspora(s)…, pp. 3-36:
[19] Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև **Վարդանյան Հ.,** Սփյուռքի սահմանումը և եզրույթի իմաստային ընդլայնման պատճառները ըստ Խաչիկ Թոլոյոլյանի, «Հայագիտության հարցեր» հանդես, Եր., 2016, N 2 (8), էջ 95-108:

նալ առնվազն մի քանի սերունդ, որի ընթացքում հայրենիքի հետ կապերը ստանում են ինստիտուցիոնալ բնույթ[20]:

Տիպիկ սփյուռքյան համայնքի և նմանատիպ մյուս խմբերի տարբերությունը ցույց տալու համար Խ. Թոլոյոլյանը համեմատում է սփյուռքը և մասնավորապես **էթնիկ խումբը**: Ի՞նչով են միմյանցից տարբերվում սփյուռքյան համայնքը և էթնիկ համայնքը, այն դեպքում, երբ երկուսն էլ գծում և «հսկում» են խորհրդանշական, վարքագծային սահմաններ, որոնցով հավաքական ինքնությունը մնում է ընդունող երկրում գերիշխող ինքնությունից տարբեր[21]:

Խ. Թոլոյոլյանի ընդգծած առանձնահատկություններից փորձենք հակիրճ նշել միայն մի քանիսը. էթնիկ համայնքի առումով՝ հայրենիքի և այլ երկրների ազգակից համայնքների հետ կապեր պահպանելու հանձնառությունը բացակայում է, թույլ է կամ լավագույն դեպքում՝ ընդհատումներով է և ցուցաբերվում է անհատների, այլ ոչ թե համայնքի կողմից՝ որպես հավաքականության: Մինչդեռ սփյուռքի համար այլ երկրներում ազգակից համայնքների և հայրենիքի հետ ինստիտուցիոնալացված կապը հիմնարար հատկանիշ է[22]: Սփյուռքի կարևոր հատկանիշներից է հայրենիքի նորոգության և վերադարձի (հայրենադարձության) գաղափարախոսությունը, ընդ որում՝ դեպի հայրենիք սփյուռքաբնակները վերադառնում են ոչ միայն բառացիորեն, այլև առավել հաճախ առանց իրական հայրենադարձության. նրանք դառնում են դեպի հայրենիք՝ ճամփորդության, դրամական փոխանցումների, մշակութային փոխանակումների, քաղաքական լոբբինգի և հայրենիքի հետ կապեր պահելու տարբեր ջանքերի շնորհիվ: Էթնիկ համայնքների առումով՝ հայրենիքի հետ այսպիսի շարունակական կապը բնութագրական չէ: Բացի դրանից՝ սփյուռքյան համայնքները պահպանում են հայրենիքի լեզվի, կրոնական, սոցիալական և մշակութային փորձառության տարրերը՝ կա՛մ անեղծ, կա՛մ, քանի որ ժամանակ է անցել, երկմշակութային՝ հիբրիդային ձևով, իսկ էթնիկ խմբերը դրսևորում են երկմշակութայնության թույլ աստիճան[23]:

---

[20] Մանրամասն տե՛ս **Վարդանյան Հ.,** Սփյուռքի սահմանումը և եզրույթի իմաստային ընդլայնման պատճառները ըստ Խաչիկ Թոլոյոլյանի, «Հայագիտության հարցեր» հանդես, 2016, N 2 (8), էջ 95-108:

[21] Տե՛ս **Tololyan Kh.,** Rethinking Diaspora(s)..., pp. 3-36: Տե՛ս նաև **Վարդանյան Հ.,** Սփյուռքի սահմանումը և եզրույթի իմաստային ընդլայնման պատճառները ըստ Խաչիկ Թոլոյոլյանի, «Հայագիտության հարցեր» հանդես, Եր., 2016, N 2 (8), էջ 95-108:

[22] Տե՛ս նույն տեղում:

[23] Տե՛ս նույն տեղում:

Խ. Թոլոյանը սփյուռքի համար կարևոր հատկանիշ է համարում նվիրված, ակտիվ փոքրամասնության՝ «առաջնորդող ընտրախավի» դերակատարությունը, որը հիմնում է սփյուռքյան հատուկ մտահոգություններ ունեցող կազմակերպություններ[24], սփյուռքաբնակների հայացքն ուղղում է էթնիկ համայնքից անդին՝ դեպի հայրենիք, դեպի այլ համայնքներ և դեպի առավել ակտիվ ներգրավվածություն գերիշխող ազգային խմբում ու պետական համակարգում[25]: Սփյուռքի համար, թերևս, բանաձևային նշանակություն ունի Խ. Թէօլէօլյանի «անդրազգային պահի պետականազուրկ իշխանություն» ("stateless power in the transnational moment") ձևակերպումը, ըստ որի՝ սփյուռքը ենթադրում է համախմբվելու, կազմակերպվածության, հանձնառությունների, ուստի և հավակնությունների բարձր աստիճան հասարակական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտներում: Խ. Թէօլէօլյանը «անդրազգային պահի պետականազուրկ իշխանություն»-ը տալով իբրև տեսական մակարդակի ձևակերպում, այն դուրս է բերում տարածության և ժամանակի չափումներից՝ հուշելով, որ պատմության ցանկացած շրջափուլում նման համախմբումը ազգի համար գոյություն ունի որպես մշտառկա հնարավորություն: Ընդ որում՝ այս դեպքում “power” բառը “state power”-ն է՝ երբ տարածքը, բնակչությունը և միասնական ազգային հասարակությունը դրսևորում են տնտեսական, ռազմական, մշակութային ուժ, որն ապահովում է ազգի և պետության անվտանգությունն ու ինքնավարությունը: Քաղաքագիտության դիսկուրսում սա power-ի առաջին իմաստն է, երբ քաղաքականությունը այնպիսի գործընթաց է, որով վերնախավը տիրապետում է այդ ուժի լծակներին և գործադրում այն՝ հետապնդելու և նվաճելու սեփական կամ պետության քաղաքացիների շահերը[26]:

***

Սփյուռքի վերաբերյալ տեսական քննարկումներում ուշագրավ է նաև շարժունության և «նստակյացության»՝ աշխարհագրական որոշակի տարածքում խարսխված լինելու հարաբերակցության խնդիրը:

Այս առումով՝ սփյուռքագիտական դիսկուրսում՝ հատկապես հետարդիական մոտեցումներով իրականացված ուսումնասիրություններ-

[24] Տե՛ս **Tololyan Kh.,** The contemporary discourse of diaspora studies…, pp. 647-655.
[25] Տե՛ս **Tololyan Kh.,** Rethinking Diaspora(s)..., pp. 3-36:
[26] Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև **Tololyan Kh.,** Stateless power and the political agency of Diasporas: An Armenian Case Study. In Opportunity structures in Diaspora Relations, ed. by Totoricaguena G., Reno, Nevada, Center for Basque Studies, 2007, pp. 215-234.

ռում, հաճախ չափազանցվում է շարժունության դերը, իսկ այն համայնքները, որոնք կազմակերպված են, ամուր կապված են որոշակի տարածքի հետ, պահպանում են կառույցները, հաստատությունները և ինքնությունը, կա՛մ անտեսվում են վերլուծություններում, կա՛մ դիտվում են որպես զարգացման միտում չունեցող, ոչ գերակա երևույթներ: Քանի որ սփյուռքները երևան են գալիս իբրև տեղաշարժերի հետևանք, արմատավորվել է այն մոտեցումը, թե կապվածությունը վայրի հետ չունի և չի կարող առանցքային դեր ունենալ սփյուռքաբնակների ինքնաընկալման և փորձառության համար:

Սփյուռքի համար շարժունության վերոնշյալ ընկալումը համարելով գերարժևորված՝ Խ. Թոլոյոլյանը սփյուռքագիտական դիսկուրսում փորձում է հավասարակշռություն հաստատել՝ նշելով, որ չնայած անցյալ մի քանի տասնամյակների ընթացքում գլոբալ տարածությունների բացությանը և շարժունության՝ արդի պատմության համար էական կերպափոխող հատկանիշ լինելուն՝ սփյուռքում բնակության վայրի հետ կապվածությունը շարունակում է մնալ կարևոր: Այդ շարժունության չափն ու ազդեցությունը չպետք է ստվերեն սփյուռքի համար տեղի, նստակեցության, վերաբնաշխարհայնացումի (reterritorialization), սփյուռքյան կառույցների նշանակությունը[27]:

Շարժունության գերարժևորման հիմքում Խ. Թոլոյոլյանը տեսնում է մի քանի գործոններ. առաջինը սփյուռքագիտության և նրան սերտորեն կապված գիտակարգերի փոխհարաբերություն է. մարդաբանները, ովքեր իրենց գաղափարները հարմարեցրել են նոր պայմաններին՝ ավանդական, աշխարհագրական որոշակի տարածքի կապված, տարանջատված հանրույթների հազվադեպության և միգրացիոն մեծ հոսքերի իրողություններին, սկսել են ավելի հաճախ անդրադառնալ տեղաշարժերի, ինչպես նաև մարդկանց (ներառյալ՝ սփյուռքաբնակների), բնակավայրի և տեղի տարբաժանման թեմային: Ի վերջո՝ ակամա չափազանվել է բնակության վայրից սփյուռքյան ինքնության և փորձառության տարանջատման նշանակությունը[28]:

Երկրորդ պատճառն այն է, որ զարգանալով անդրազգայնության, հետգաղութատիրության, համաշխարհայնացման ուսումնասիրությունների հետ սերտ կապի մեջ՝ սփյուռքագիտությունը հարստացել

[27] Տե՛ս **Tololyan Kh.,** Restoring the Logic of the Sedentary to Diaspora Studies. In Les diasporas. 2000 ans d'histoire, eds. Anteby-Yemini, L., Berthomière W. and Sheffer G. Rennes, 2005, pp. 137-148.

[28] Տե՛ս նույն տեղում:

է նրանցից, սակայն նրանց գաղափարները ստվերել են «տեղի» կարևորությունը սփյուռքների համար: Անդրազգայնության, հետգաղութատիրության, համաշխարհայնացման ուսումնասիրությունները տարբեր պատճառներով քննադատաբար են մոտենում աշխարհագրականորեն սահմանված տեղի՝ որպես ազգի, ազգ-պետության, հավաքական ինքնության խարիսխի գաղափարին[29]:

Հաջորդ պատճառը շարժունության նույնականացումն է անհատականության, ազատության հետ, ինչպես նաև շարժունության իմաստաբանական շփոթը այն եզրույթների հետ, որոնք կապված են, սակայն նույնական չեն շարժունության հետ: Միացյալ Նահանգներում սփռումը, միգրացիան, տեղափոխությունը և այլ նմանատիպ բառեր, որոնք նույն իմաստաբանական դաշտում են, գնալով ենթադասվում են շարժունության ընդհանրական գաղափարին: Համաշխարհայնացման տեսության համաձայն՝ մարդկանց, որպես հայրենիք ընկալվող աշխարհագրական տարածքի և մշակույթի միջև կապի թուլացումը անխուսափելի է և նույնիսկ՝ ցանկալի ազատական աշխարհակարգի հաստատման համար. «Շարժունության նկատմամբ սևեռումը սկսվում և ավարտվում է անհատի՝ հատկապես ներգաղթյալ անհատի ազատության հռչակմամբ»[30],- նշում է Խ. Թոլոյոյանը: Աշխարհագրական տեղաշարժը դարձել է ազատության հոմանիշը, սոցիալ-տնտեսական վերելքի նախապայմանը և շարժունության խրախուսվածությունը ուղեկցվել է սփյուռքի հաստատված, արմատացած համայնքների քննադատությամբ՝ հիմնականում ԱՄՆ-ի լիբերալ ակադեմիական վերնախավի կողմից[31]:

Սփյուռքի ամերիկյան դիսկուրսը հակված է ընդունելու միայն առաջին սերնդի ներգաղթյալների հաստատուն տեղակայվածությունը և յուրատիպ ինքնությունը: Նրանք կարող են ստեղծել Փոքր Հավանա՝ Մայամիում, Փոքր Իտալիա, Չայնաթաուն՝ Նյու Յորքում, սակայն հետագա սփռումը այսպիսի վայրերից համարվում է առաջընթաց, սպասելի և ցանկալի, մինչդեռ ակտիվ դիմադրությունը դրան, դիտվում է որոշակի մտահոգությամբ[32]:

Այս առումով՝ սփյուռքյան «անկլավները» դիտվում են իբրև մեկուսի շրջաններ, որոնք խոչընդոտում են միգրանտների առաջընթացը:

[29] Տե՛ս նույն տեղում:
[30] **Tololyan Kh.,** The American Model of Diasporic discourse. In Diasporas and Ethnic Migrants, Germany, Israel and Russia in Comparative Perspective, ed. by R. Munz, R. Ohliger, 2003, pp. 56-73.
[31] Տե՛ս նույն տեղում:
[32] Տե՛ս նույն տեղում:

Առաջընթացի ձախողումը վերագրվում է գերիշխող (դոմինանտ) մշակույթի կողմից մերժված լինելուն, հմտությունների և ինքնավստահության պակասին, տվյալ անկլավի մենթալիտետին, որը դիտվում է իբրև նեղմտություն, սահմանափակություն, ինչպես նաև ամերիկյան ներգրավվածության բարձր գաղափարի մերժում[33]: Խ. Թյոլյոլյանը նշում է, որ այսպիսի դիրքորոշումներն անտեսում են այն փաստը, որ որոշ սփյուռքաբնակներ գուցե հենց իրենք են նախընտրում «անկլավը», ինչը հնարավորություն է տալիս վերահաստատել, կառուցել հաստատություններով հարուստ համայնքներ, որոնցում եկեղեցիները, դպրոցները, հայրենասիրական, բարեգործական միությունները, ակումբները, ծերանոցները, մարզական և մշակութային խմբերը պահանջում են հավաքական զոհաբերություն՝ ապահովելով հավաքական արդյունք: Դա հնարավորություն է տալիս ունենալու ինքնություն, որը կապված է աշխարհագրական կոնկրետ տարածքի հետ:

Խ. Թյոլյոլյանի այս դիտարկումները ոչ թե մերժում կամ նվազեցնում են անդրազգային և գլոբալ հոսքերի, շարժունության դերը սփյուռքների համար, այլ ընդգծում են դրանց առկայության պարագայում համախմբված և որոշակի կառույցներ, դիմագիծ ունեցող համայնքների կայուն առկայությունը: Անդրազգային և գլոբալ հոսքերը սփյուռքների դեպքում չպետք է ընկալել իբրև շարժունություն՝ առանց հաստատունության: Խ. Թէօլէօլյանը սա համեմատում է էլեկտրական հոսքի հետ, որը դյուրանում է հարաբերականորեն հաստատուն բևեռների առկայության դեպքում: Նույն կերպ կայուն անդրազգային հոսքերը պահանջում են հարաբերություններ հաստատուն բնակավայրերի միջև՝ լինեն դրանք սփյուռքյան երկու համայնքներ, թե՝ հայրենիքը և սփյուռքյան համայնքը[34]:

***

Սփյուռքագիտական հիմնախնդիրները բազմաթիվ են և դրանց վերաբերյալ Խ. Թյոլյոլյանի վերլուծությունների մասին երկար կարելի է գրել, սակայն այս նյութի գլխավոր նպատակը դա չէ: Ինչ վերաբերում է սփյուռքագիտության կայացման գործում Խ. Թյոլյոլյանի ներդրումն արժևորելուն, դա թերևս, կարող էին և արդեն լավագույնս արել են ոլորտի մյուս ամենանշանավոր գիտնականները.

[33] Տե՛ս նույն տեղում:
[34] Տե՛ս նույն տեղում:

«Այս գիտակարգի զարգացմանը նպաստող խոշոր ազդեցությունը եղել է պրոֆեսոր Խաչիկ Թյոլյոլյանի նախաձեռնողականությունը և անսասան նվիրումը՝ հրատարակելու «Սփյուռքը»՝ այս գիտակարգի պարբերականը»[35]:

(Գաբրիել Շեֆֆեր, իսրայելացի քաղաքագետ)

«Խաչիկ Թյոլյոլյանը մնում է սփյուռքյան երևույթների մեծագույն մեկնաբանը և ամսագիր խմբագրողներից ամենաջանասերը: Շատ գիտնականներ են օգտվել նրա ընդարձակ և ներհուն մեկնաբանություններից»[36]:

(Ռոբին Քոհեն, անգլիացի սոցիոլոգ)

Ուստի շնորհավորելով հարգարժան պրոֆեսորին հոբելյանի առթիվ՝ մաղթում ենք գիտական և հասարակական բեղուն գործունեություն, որոնց շնորհիվ կշարունակի զարգանալ սփյուռքագիտական միտքը:

Հրաձին Վ. Վարդանյան

Պատմ. գիտ. թեկնածու

Հրաձին Վ. Վարդանյան – գիտական հետաքրքրության շրջանակում են համաշխարհային սփյուռքի, անդրազգայնության, հայկական սփյուռքի ուսումնասիրման բնագավառները: Զբաղվում է սփյուռքի արդի տեսություններին, հայկական սփյուռքի պատմությանն առնչվող հարցերով: Հեղինակ է շուրջ 10 գիտական հոդվածների:

Էլ հասցե՝ vardanyanhratsin@gmail.com

[35] **Sheffer G.,** Diaspora Politics: At Home Abroad. Cambridge: Cambridge University Press, 2003, p. xi.
[36] **Cohen R.,** Global Diasporas: An Introduction. London, Routledge, 2008, p. xii.

Summary

THE FOUNDER OF DIASPORA STUDIES

On the occasion of the 80th anniversary of Khachig Tololyan

Hratsin V. Vardanyan

Ph.D. in History

Keywords – Khachig Tololyan, "Diaspora. Journal of Transnational Studies"diaspora studies, identity, Armenian diaspora.

On the occasion of the 80th anniversary of Khachig Tololyan, the article discusses his role in establishing diaspora studies as a new discipline. In this sense, he has a great role as a scholar and as the founder and editor of the “Diaspora: A Journal of Transnational Studies”. Founded in 1991, the journal is the main platform where interdisciplinary or multidisciplinary diaspora studies began to be formed.

The article provides a brief overview Kh. Tololyan's biography as a scholar and his comments on diasporic issues, including the concept of diaspora and its key features.

Notably, according to Tololyan, the key feature of a typical diaspora is the high level of mobilization in the social, cultural, and political spheres. In this context, the role of the dedicated and active elite is particularly significant.

Other prominent scholars in this field had a high regard for Tololyan's contribution to diaspora studies. In particular, G. Sheffer notes ‘Of great importance in furthering the development of this academic field has been Professor Khachig Tololyan’s initiative and unwavering dedication to publishing the field’s journal, Diaspora’. R. Cohen writes ‘Khachig Tololyan remains the supreme interpreter of diasporic phenomena and the most diligent of journal editors. Many scholars have benefited from his lengthy and learned comments’.

Резюме

ОСНОВАТЕЛЬ ДИАСПОРОВЕДЕНИЯ

К 80-летнему юбилею Хачика Теолеоляна

Грацин В.
Варданян
Канд. ист. наук

Ключевые слова - Хачик Тёолёолян, «Диаспора. Журнал транснациональных исследований», диаспороведение, идентичность, армянская диаспора.

В статье изучается деятельность Хачика Тёолёоляна и его роль в становлении диаспорологии как новой дисциплины. Заметим, что в этом году отмечается 80 лет со дня рождения ученого. Велика его роль как основателя - редактора журнала «Диаспора: Журнал транснациональных исследований». Журнал, основанный в 1991 г., является основной площадкой, где начали формироваться междисциплинарные или мультидисциплинарные диаспорологические исследования.

В статье кратко представлена биография Х. Тёолёоляна, его научная деятельность и его комментарии по вопросам диаспоры, включая концепцию понятия «диаспоры» и ее ключевые черты.

Примечательно, что, по мнению Тёолёоляна, высокий уровень мобилизации всоциальной, культурной и политической сферах является ключевой чертой типичной для диаспоры. В этом контексте особенно значима роль преданной и активной элиты.Другие выдающиеся ученые в области диаспороведения не раз высоко оценивали вклад Тёолёоляна в изучение диаспоры. В частности, Г. Шеффер отмечает: «Огромное значение для дальнейшего развития этой академической области имела инициатива профессора Хачика Тёолёоляна и его непоколебимая преданность изданию журнала «Диаспора». А Р. Коэн пишет: «Хачик Тёолёолян остается высшим интерпретатором диаспоральных явлений и самым прилежным из редакторов журналов. Многие ученые извлекли пользу из его длинных и научных комментариев».

Օգտագործված գրականություն

1. **Գոյունեան Ա.Ը. Քինյ. Գ.,** «Խաչիկ Թէօլէօլեան Եւ Սփիւռքագիտութիւնը (Ա.)» (https://www.aztagdaily.com/archives/603460)

2.**Գոյունեան Ա.Ը. Քինյ. Գ.,** «Խաչիկ Թէօլէօլեան եւ սփիւռքագիտութիւնը (ժէ.)», (https://bit.ly/3C6hp5H)

3. **Երամյան Մ.,** «10 Հարցում Խաչիկ Թէօլէօլեանին՝ Մարուշ Երամեանէն» (https://pakine.net/archives/9414): «Յառաջ», Յուլիս 3, 1998:

4.**Վարդանյան Հ.,** Սփյուռքի սահմանումը և եզրույթի իմաստային ընդլայնման պատճառները ըստ Խաչիկ Թյոլոյանի, «Հայագիտության հարցեր» հանդես, 2016, N 2 (8), էջ 95-108:
5.**Tololyan Kh.,** The contemporary discourse of diaspora studies, Comparative Studies of South Asia, Africa and the Middle East, 27 (3), 2007, pp. 647-655.
6.**Tololyan Kh.**, Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment, Diaspora: A journal of Transnational Studies, 1996, 5 (1), pp. 3-36.
7.Tololyan Kh., Stateless power and the political agency of Diasporas: An Armenian Case Study. In Opportunity structures in Diaspora Relations, ed. by Totoricaguena G., Reno, Nevada, Center for Basque Studies, 2007, pp. 215-234.
8**.Tololyan Kh.,** Restoring the Logic of the Sedentary to Diaspora Studies. In Les diasporas. 2000 ans d'histoire, eds. Anteby-Yemini, L., Berthomière W. and Sheffer G. Rennes, 2005, pp. 137-148.
9.**Tololyan Kh.,** The American Model of Diasporic discourse. In Diasporas and Ethnic Migrants, Germany, Israel and Russia in Comparative Perspective, ed. by R. Munz, R. Ohliger, 2003, pp. 56-73.
10.**Sheffer G.,** Diaspora Politics: At Home Abroad. Cambridge: Cambridge University Press, 2003.
Cohen R., Global Diasporas: An Introduction. London, 2008.

REFERENCES

1. **Goyunean Av. K'hny. G.,** Khach'ik T'eoleolean yev sp'iwrk'agitut'iwně (ZHE) (https://bit.ly/3C6hp5H) **(In Armenian).**
2. **Goyunean Av. K'hny. G.,** Khach'ik T'eoleolean yev sp'iwrk'agitut'iwně (A), (https://www.aztagdaily.com/archives/603460) **(In Armenian).**
3. **Vardanyan H.,** Sp'yurk'i sahmanumě yev yezruyt'i imastayin ěndlaynman patcharnerě ěst Khach'ik T'eoleoleani, «Hayagitut'yan harts'er» handes, 2016, N 2 (8), էջ 95-108 **(In Armenian).**
4. **«Yaraj»,** Yulis 3, 1998 **(In Armenian).**
5. **Yeramean M.,** «10 Harts'um Khach'ik T'eoleoleanin, Marush Yerameanen» (https://pakine.net/archives/9414) **(In Armenian).**